ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ,ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ ____________ Ռ. Մարտիրոսյան

Կոտայքի տարածաշրջանային

պետական քոլեջի կառավարման

խորհրդի նախագահ

20 օգոստոսի 2020 թվական

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

# (փոփոխություն)

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՀՐԱԶԴԱՆ 2020

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհրդի իրավասությունները, ձևավորման և գործունեության կարգը:

1.2. Ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգը, քննարկում, ընդունում և հաստատում է քոլեջի կառավարման խորհուրդը:

1.3. Ուսումնամեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են նույն կարգով:

## 2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ

2.1. ԿՏՊՔ-ի ուսումնամեթոդական խորհուրդը քոլեջում ուսումնամեթոդական հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է , որը կոչված է նպաստելու ԿՏՊՔ-ում պարվող ուսումնական և մեթոդական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:

2.2. Ուսումնամեթոդական խորհրդի կազմի մեջ մտնում են փոխտնօրեններ, կաբինետի վարիչներ, ամբիոնի վարիչներ, պրակտիկայի, հեռակա բաժնի և այլ բաժինների վարիչներ՝ 15-ից 25 անդամ, որոնք հրամանագրվում են տնօրենի կողմից՝ յուրաքանչյուր ուս. տարվա համար:

## 3.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.1. Քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը համակարգում է ուսումնական գործընթացը:

3.2.Քննարկում և երաշխավորում է՝

- Ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը
- Գործող և նոր բացվող մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը
- Դասավանդման նոր և առաջավոր մեթոդներն ու եղանակները
- Ուսումնական գործընթացում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը
- Այլ հաստատությունների հետ ուսումնամեթոդական համագործակցության հարցերը
- Այլ աշխատանքներ

## 4.ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1.Ուսումնամեթոդական խորհուրդը պարբերաբար, երեք ամիսը մեկ, հրավիրում է նիստեր, որոնցում քննարկում է իր իրավասությանը համապատասխան հարցեր և առաջարկություններ ներկայացնում տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

4.2.Ուսումնամեթոդական խորհուրդի նախագահը ի պաշտոնե ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենն է: Խորհուրդը իր անդրանիկ նիստում ընտրում է քարտուղար:

4.3.Ուսումնամեթոդական խորհրդի նախագահը ղեկավարում է խորհրդի ընթացիկ գործունեությունը և վարում նիստերը, իր ստորագրությամբ վավերացնում ուսումնամեթոդական խորհրդից ելնող փաստաթղթերը:

4.4.Ուսումնամեթոդական խորհրդի նախագահը խորհրդի ընթացիկ աշխատանքների մասին զեկուցում է տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

4.5. Ուսումնամեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից:

4.6.Ուսումնամեթոդական խորհրդի նախագահն ու քարտուղարը իրենց պաշտոններում են մինչև խորհրդի ժամկետի ավարտը, եթե հարկադրական փոփոխությունների անհրաժեշտություն չի առաջանում:

4.7.Ուսումնամեթոդական խորհուրդը հարցեր է քննարկում տնօրենի առաջարկով կամ իր աշխատանքային պլանին համապատասխան:

4.8.Ուսումնամեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք ներկայացվում են աշխատանքային պլանին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:

4.9.Ուսումնամեթոդական խորհուրդն առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում քոլեջի տնօրենին կամ տնօրինական խորհրդին:

4.10.Ուսումնամեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են, եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին:

4.11.Ուսումնամեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները

կատարող Վ. Թովմասյան